2024 Թ. ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻՆ ՀԱՍՑԵԱԳՐՎԱԾ ԴԻՄՈՒՄ-ԲՈՂՈՔՆԵՐԻ, ԹԵԺ ԳԾԵՐԻ, ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

2024 թվականի ընթացքում Տեսչական մարմնին հանրության և տնտեսավարող սուբյեկտների կողմից հասցեագրվել է ընդհանուր առմամբ 748 բողոք, որոնք ըստ բնագավառների բաշխված են հետևյալ կերպ.



2023 թվականի ընթացքում Տեսչական մարմնին հանրության և տնտեսավարող սուբյեկտների կողմից հասցեագրվել է ընդհանուր առմամբ 829 բողոք, որից 542-ը (65,38%) վերաբերում է քաղաքաշինության բնագավառին, 134-ը (16,16%)՝ տրանսպորտային անվտանգության, 68-ը (8,2%)՝ հրդեհային և տեխնիկական անվտագության, 76-ը (9,17%)՝ էներգետիկայի և էներգասպառման, իսկ 9-ը (1,09%)՝ հողի պահմանման և հողօգտագործման բնագավառներին։

2022 թվականի ընթացքում Տեսչական մարմնին հանրության և տնտեսավարող սուբյեկտների կողմից հասցեագրվել էր ընդհանուր առմամբ 684 բողոք, որից 432-ը (63,16%) վերաբերում էր քաղաքաշինության բնագավառին, 114-ը (16,67%)՝ տրանսպորտային

անվտանգության, 78-ը (11,4%)՝ հրդեհային և տեխնիկական անվտագության, 56-ը (8,19%)՝ էներգետիկայի և էներգասպառման, իսկ 4-ը (0,58%)՝ հողի պահմանման և հողօգտագործման բնագավառներին։

2022-2024 թվականների ընթացքում ստացված բողոքների համեմատական գրաֆիկն ունի հետևյալ արտացոլումը.



2024 թվականի ընթացքում հանրությունից ստացված բողոքներն ըստ ամիսների ունեն հետևյալ բաշխվածությունը՝



Ընդ որում, ստացված բողոքների ընդհանուր քանակի 62,7%-ը վերաբերում է Երևանում գործունեություն իրականացնող տնտեսավարողներին կամ գտնվող օբյեկտներին, մնացածն՝ ըստ պատկերի.



Բողոքների ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ ստացված բողոքներից 217-ը հիմնավոր չի, 101-ը վերահասցեագրվել է, անհետևանք է թողնվել 31 բողոք, հնարավոր չի լուծել 9-ը: Հիմնավոր 222 բողոքից 2024 թվականի ընթացքում լուծում է ստացել 140-ը (հիմնավոր բողոքների 63%): Ուսումնասիրության փուլում է 250 բողոք, որից 142-ը վերաբերում է քաղաքաշինության, 4-ը՝ տրանսպորտի, 40-ը՝ հրդեհային և տեխնիկական անվտագության, 64-ը՝ էներգետիկայի և էներգասպառման բնագավառներին:



2024 թվականի ընթացքում հանրությունից թեժ գծով ստացվել է 162 բողոք, ինչը կազմում է ներկայացված բողոքների 21,6%:

2023 թվականին թեժ գծով ստացվել էր 251 բողոք (30,27%), իսկ 2022-ին՝ 269 բողոք (39,3%):